
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՀՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

(Մ. Հասրաթյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Լրացան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանի ծննդյան 80 և գիտական գործունեության 50-ամյա հոբելյանները:

Մ. Հասրաթյանը ծնվել է 1935 թ. հունիսի 20-ին Երևանում, անվանի պատմաբան-բանասեր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Հասրաթյանի և վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյան-Հասրաթյանի ընտանիքում:

1952-ին Ոսկե մեդալով ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը՝ Մ. Հասրաթյանն ընդունվում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժանմունք, որն ավարտում է 1958-ին, գերազանցության դիպլոմով՝ ստանալով «Ճարտարապետի» որակավորում: Ինստիտուտում նրա դասախոսներն էին Ռաֆայել Բարայեյանը, Սամվել Սաֆարյանը, Վարազդատ Հարությունյանը, իսկ դիպլոմային աշխատանքի ղեկավարն էր Միքայել Մազմանյանը:

1958-ին Մ. Հասրաթյանը, որպես ավագ ճարտարապետ, աշխատանքի է անցնում նորաբաց «Երևաննախագիծ» ինստիտուտի Գևորգ Թամանյանի արվեստանոցում: Նրա նախագծերով Երևանում կառուցվում են բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ, նա հեղինակում է Լուկաշինի անվան սովետականության և Քանաքեռի-Կի բնակելի ավանների հատակագծերը: Եվ դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր Մ. Հասրաթյանի ստեղծագործական կյանքը, եթե նա շարունակեր նախագծող ճարտարապետի իր խոստումնալից գործունեությունը: Բավական է նշել, որ երիտասարդական կառույցների նախագծման համար 1970-ին երիտասարդ ճարտարապետն արժանանում է ՀԼԿԵՄ մրցանակի, իսկ տասնամյակներ անց՝ 2007-ին՝ ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

Մակայն այլ էր երիտասարդ ճարտարապետի ուղին. նա պիտի դառնար արժանավոր շառավիղ Հասրաթյանների գիտական գերդաստանի, պիտի նվիրվեր գիտությանը, գնալով հոր՝ վաստակաշատ հայագետ, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի հետքերով: Մանավանդ որ գրիչը նույնքան հոգեհարազատ էր Մ. Հասրաթյանին, ինչքան նախագծողի մատիտը. դեռևս 11 տարեկանից նա «Պիոներ կանչ» թերթի ակտիվ ընթերցողն

էր ու թղթակիցը և այդ թերթի էջերում էլ հենց տպագրվեց Մ. Հասրաթյանի անդրանիկ հոդվածը՝ «Ես պահանջում եմ» վերնագրով:

1964 թ. ապրիլից Մ. Հասրաթյանի գիտաստեղծագործական և գիտակազմակերպական գործունեությունն անխզելիորեն կապվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ նախ՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ինստիտուտի գիտքարտուղար, իսկ 1971 թ. մինչև 1976 թ., զուգահեռաբար՝ նաև Արվեստի ինստիտուտում գործող՝ Արվեստագիտության և ճարտարապետության գիտական աստիճանաշնորհման խորհրդի գիտքարտուղար: 1979 թ. Մ. Հասրաթյանը նշանակվում է ինստիտուտի Պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի նորաստեղծ բաժնի վարիչ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1985 թ.:

1988 թ. ապրիլի 15-ից մինչ օրս Մ. Հասրաթյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչն է:

1969 թ. Մ. Հասրաթյանը պաշտպանում է ատենախոսություն՝ «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով (առանց գիտական ղեկավարի) և ստանում ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: 1973 թ. ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից Հասրաթյանն ստանում է «ավագ գիտական աշխատողի» կոչում՝ «Ճարտարապետության տեսություն և պատմություն» մասնագիտության գծով:

1965-ից՝ մինչ այսօր Մ. Հասրաթյանն Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի, իսկ 2012-ից նաև Արվեստագիտության մասնագիտական խորհրդի անդամ է:

1993-ին Մ. Հասրաթյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի XV-XIX դ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով և ստանում Ռուսաստանի Դաշնության ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: Պաշտոնական ընդդիմախոս Վարազդատ Հարությունյանը հետագայում հիշում է. «Աշխատանքում ներկայացված էր փաստագրական մեծածավալ նոր նյութ, որի գերակշռող մասը հեղինակի երկարատև ուսումնասիրությունների արդյունքն էր: Սրանում հանգամանակի ու բազմակողմանի վերլուծությունների հիման վրա արված են կարևոր եզրակացություններ. դրանցից հիմնականն ու էականն այն է, որ ուշ միջնադարում հայկական ճարտարապետությունն անկումային չէր (ինչպես դա կանխակալ համարվում էր), այլ իր ժամանակաշրջանի գեղագիտական ճաշակին, երկրի տնտեսական դրությանը, շինարարական տեխնիկային համապատասխան զարգացման նոր փուլի արդյունք էր: Ատենախոսն այդ փուլը ներկայացրեց որպես միջնադարյան հայկական ճարտարապետության նվաճումների և 20-րդ դարի Հայաստանի ճարտարապետության թռիչքաձև վերելքի միջև մի կարևոր օղակ, կամուրջ»¹:

2003-ին Մ. Հասրաթյանը ստանում է «ճարտարապետություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի առաջադրմամբ՝ 2006-ին Մ. Հասրաթյանն ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դրանից մեկ տարի առաջ՝ 2005-ին, Մ. Հասրաթյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի

¹ Հասրաթյան Մ., Գենսամատենագիտություն (Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն, N 2, կազմող՝ Տեր-Մինայան Ա., պատ. խմբագիր՝ Սաստրյան Ա., ներածությունը՝ Հարությունյան Վ.), Ե., 2005, էջ 9:

գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսնում «Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն» շարքի 2-րդ համարը՝ «Մուրադ Հասրաթյան», որն ընդգրկում է գիտնականի 1965-2005 թթ. հրատարակած աշխատանքների ցանկը (բացառությամբ քառահատոր՝ Հայկական Համառոտ Հանրագիտարանում տպագրված 140 հոդվածների)²:

Մ. Հասրաթյանը հեղինակ է մոտ երկու տասնյակ գրքերի, բազմաթիվ բրոշյուրների, հարյուրավոր հոդվածների, թեզիսների, գրախոսությունների և հանրագիտարանային հոդվածների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ Մոսկվայում, Գինում, Թբիլիսիում, Փարիզում, Լիոնում, Վիեննայում, Լիսաբոնում, Հռոմում, Վենետիկում, Միլանում, Բոլոնիայում, Նեապոլում, Քյոլնում, Հալլեում, Լեյդենում, Ջամոստյեում, Բելյուրում, Հալեպում, Տոկիոյում, Մոնրեալում, Անկարայում, Վարշավայում: Գիտնականի աշխատություններին ու զեկուցումներին բնորոշ են մասնագիտական բարձր մակարդակը և փաստական նյութի լայն ընդգրկումը:

Մ. Հասրաթյանի առաջին գիրքը, նվիրված ծննդավայր Երևանի ճարտարապետությանը, լույս տեսավ Մոսկվայում 1968-ին, քաղաքի հիմնադրման 2750-ամյակի օրերին՝ Վարազդատ Հարությունյանի և Արսեն Մելիքյանի համահեղինակությամբ: Հեղինակային նույն կազմը ԽՍՀՄ կազմավորման 50-ամյակի կապակցությամբ 1972-ին Մոսկվայում հրատարակում է «Архитектура Советской Армении» աշխատությունը:

Մ. Հասրաթյանը ճարտարապետության այն եզակի պատմաբանն է, որն ուսումնասիրել և հրատարակել է հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, ընդ որում ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն ու ֆրանսերեն՝ օտարալեզու ընթերցողի համար: 1985-ին Մոսկվայում լույս տեսած «Ակնարկ հայ ճարտարապետության» (ռուսերեն և ֆրանսերեն)³ մենագրության մեջ «առաջին անգամ ներկայացվում է հայ ճարտարապետության անցած ուղին իր սկզբնավորումից մինչև 20-րդ դարը»⁴, իսկ 2010-ին Լիոնում ֆրանսերենով հրատարակվում է «Հայ ճարտարապետության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը⁵:

«Հայ արվեստի պատմություն»⁶ հիմնարար աշխատության համար, որտեղ Մ. Հասրաթյանը հեղինակել է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված բաժինները, նա կերպարվեստի ոլորտում արժանացել է 2009 թ. ՀՀ պետական մրցանակի:

Մ. Հասրաթյանը գրել է նաև հայոց պատմության քառահատորյակի՝ հայկական ճարտարապետությանը վերաբերյալ բոլոր հոդվածները:

Ծանրակշիռ է Մ. Հասրաթյանի ներդրումը մասնավորապես ուշ միջնադարի՝ (XV-XVIII դդ.) հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում: «Մինչև Մ. Հասրաթյանի աշխատությունների երևան գալը, հայ ճարտարապետության պատմության մեջ հայկական ուշ միջնադարյան (XVII-XVIII) հուշարձանները սակավ էին շրջանառվում: Նա առաջինն է լայ-

² Նույն տեղում:

³ Асратян М. Очерк армянской архитектуры, М., 1985.

⁴ Հասրաթյան Մ., Կենսամատենագիտություն, էջ 8:

⁵ Hasratian M. Histoire de l'architecture armenienne des origines a nos jours, Lyon, 2010.

⁶ Աղապյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Ե., 2009:

նամասշտաբ և համակողմանիորեն հետազոտելու ներկայացրել այդ շրջանի ճարտարապետությունը»⁷:

1973-ին Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է բնծայում «Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները» աշխատությունը⁸, որտեղ հեղինակը առաջին անգամ ուսումնասիրելով և չափագրելով ուշ միջնադարի ուշագրավ հուշարձանները՝ Տաթևի Մեծ անապատի, Շատին վանքի, Հարանց, Շնհերի Կուսանաց, Բեխի անապատների, Հալիձորի, Մեղրու բերդերի և այլ համալիրներ, բացահայտում է «վանք» և «անապատ» կրոնական հաստատությունների գործառական նշանակությունը ուշ միջնադարում, մեկնաբանում դրանց ճարտարապետական լուծումների տարբերությունը և առանձնահատկությունները: Նա «առաջ է քաշել ու հիմնավորել այն տեսակետը, որ XVII-XVIII դդ. Հայաստանում ձևավորվել է միանգամայն նոր հորինվածք՝ «վանք-ամրոց», որը ստացվել է կրոնական կենտրոնի ու պաշտպանական համալիրի գուգակցումով»⁹:

Մ. Հասրաթյանն իր աշխատություններում կարևորել է հատկապես վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը, քանի որ հայկական ճարտարապետությունը ձևավորվեց հենց վաղ միջնադարում: Նա տարիների ընթացքում հավաքել է փաստական մեծածավալ նյութ, չափագրել հայ մասնագետների ուշադրությունից դուրս մնացած բազմաթիվ հուշարձաններ, արել դրանց գծագրերը և լուսանկարները: «Մուրադ Հասրաթյանն ուսումնասիրել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել հայկական վաղորդիստոնեական մի շարք հուշարձաններ՝ դրանք հրատարակելով ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում: Դրանցից են Դրմաշենի եկեղեցին, որը լրացրեց հայ ճարտարապետության 6-7-րդ դդ. ստեղծած «գմբեթավոր դահլիճի» հորինվածքով կառույցների շարքը, Աղցի 4-րդ դարի եռանավ բազիլիկը, Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Աղվանքում նահատակված Գրիգորիսի 5-րդ դ. դամբարանն Ամարասում, Սարակապի 6-րդ դ. կենտրոնագմբեթ եկեղեցին, Կարենիսի վանքի 6-րդ դ. միանավ եկեղեցին, Լուսակերտի 4-րդ դ. միանավ բազիլիկը, պատմական Տաշիրի 6-րդ դ. արտաքին սրահով միանավ եկեղեցիների խումբը և ուրիշներ»¹⁰:

Մ. Հասրաթյանն ուսումնասիրել է և չափագրել հայկական գաղթօջախների հուշարձանները, մասնավորապես Թիֆլիսի 24 հայկական եկեղեցիները, և ուսումնասիրության արդյունքները հրատարակել ռուսերեն ու ֆրանսերեն:

Գիտնականի հետաքրքրությունների մեջ էր նաև Արցախի ճարտարապետությունը: 1964-ին նա առաջին անգամ այցելում է Ղարաբաղ՝ դառնալով Արցախի ճարտարապետության առաջին հայ պատմաբանը: Նա առաջինն է չափագրում Լեռնային Ղարաբաղի տարածքի հայկական միջնադարյան ճարտարապետության արժեքավոր հուշարձանախմբերը՝

⁷ Ծախկյան Գ., Ստեղծագործական բեղմնավոր ճանապարհ (ճարտարապետ-գիտնական Մուրադ Հասրաթյանի 75-ամյակի առթիվ) (Պատմա-բանասիրական հանդես, 2010, - 3, էջ 291-292):

⁸ Հասրաթյան Մ., Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973:

⁹ Հասրաթյան Մ., Կենսամատենագիտություն, էջ 7:

¹⁰ Նույն տեղում:

Ամարասի վանքը, Դադիվանքը, Խաթրավանքը, Գանձասարի համալիրը, Գտչավանքը, բազմաթիվ եկեղեցիներ, այդ թվում՝ Շուշիի նշանավոր Ղազանչեցոց տաճարը: Հետագայում իր ուսումնասիրությունները հրատարակում է տարբեր լեզուներով՝ առանձին բրոշուրների և հոդվածների տեսքով¹¹:

Այդ տեղական ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» մենագրությունը (1992)¹²: Պատմական Հայաստանի Արցախ նահանգի ճարտարապետության ձևավորման և զարգացման պատմությանը նվիրված այս աշխատության մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է երկրամասի XII-XIII դդ. շինարարական արվեստը, հիմնավորվում է այդ ժամանակաշրջանում արցախյան ճարտարապետական դպրոցի առանձին գոյությունը, վեր հանվում դրա առանձնահատկությունները:

Քաղաքական նշանակություն ունեցող այս կարևոր աշխատության մեջ Մ. Հասրաթյանը գիտական փաստարկներով հակահարված տվեց ադրբեջանցի կեղծարարներին, որոնք ջանում էին արցախյան ճարտարապետությունն օտարել հայ մշակույթից, ապացուցեց, որ դրանք ոչ թե «ալբանական» են, այլ՝ զուտ հայկական:

Նախիջևանում Մ. Հասրաթյանը «չափագրել, վերլուծել և գիտական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հուշարձաններ, որոնց թվում Աստապատի Կարմիր վանքը, որը դրանից ոչ շատ ժամանակ անց քանդվեց Նախիջևանի «տերերի» կողմից և այժմ իր գոյությունը շարունակում է Մ.Հասրաթյանի չափագրություններում ու նկարագրություններում: Նա ուսումնասիրել է նաև Ագուլիսի ճարտարապետական հուշարձանները և վերջին հայ գիտնականն է (գուցե և վերջին հայը), որը եղել է Ջուղայի գերեզմանատանը»¹³: Հետագայում նա ուսումնասիրություն հրատարակեց Ջուղայի խաչքարային դպրոցի առանձնահատկությունների մասին¹⁴:

2000-ին Մոսկվայում լույս է տեսնում Մ. Հասրաթյանի «Армянская архитектура раннего христианства» հիմնարար աշխատությունը (ռուսերեն և անգլերեն)՝ հարուստ փաստական նյութով, բոլոր հուշարձանների լուսանկարներով և գծագրերով¹⁵: Հետագայում Մ. Հասրաթյանը գիրքը թարգմանում է հայերեն և հրատարակում Մոսկվայում: Աշխատության մեջ¹⁶ հեղինակը ներկայացնում է IV-VII դդ. հայ ճարտարապետության հիմնական հուշարձանները՝ Հայաստանի շինարարական արվեստի բազմադարյան պատմության մեջ կարևորելով հատկապես վաղմիջնադարյան փուլը, երբ ձևավորվեց հայկական

¹¹ Documenti di architettura Armena - 17. Gandzasar (testi B. Ulubabian, M. Hasratian), Milano, 1987, Амарас, М., 1990, Дадиванк, М., 1990.

¹² Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը /պատ. խմբ.՝ Հարությունյան Վ.Մ./, Ե., 1992:

¹³ Տեր-Մինասյան Ա., Մուրադ Հասրաթյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) (Պատմաբանասիրական հանդես, 2005, - 2, էջ 349):

¹⁴ Hasratyan M. L'art des Khatchkars de l'ecole de Djougha, Enviromental design, Como (Italya), 2000, p. 84-87.

¹⁵ Асратян М. Армянская архитектура раннего христианства, М., 2000. Посвящается 1700-летию принятия Арменией христианства.

¹⁶ Հասրաթյան Մ., Հայկական վաղ միջնադարյան ճարտարապետությունը, Մ., 2010, 222 էջ:

ճարտարապետությունն ազգային նկարագիրը: Նշենք որ այս աշխատության համար Մ. Հասրաթյանին շնորհվում է տնական ընդմիջումից հետո վերականգնված Թորոս Թորամանյանի մրցանակը:

Մ. Հասրաթյանը զբաղվել է այնպիսի նշանակալից և քիչ ուսումնասիրված բնագավառով, ինչպիսին ճարտարապետական առնչությունների հիմնահարցն է: Նա ուսումնասիրել է հայ-բյուզանդական, հայ-սիրիական, հայ-իրանական, հայ-վրացական ճարտարապետական կապերը և դրանց արդյունքները հրապարակել ու ներկայացրել գիտաժողովներում:

Նշանակալի է Մ. Հասրաթյանի ավանդը հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովների (1975, 1978, 1981, 1985, 1988) կազմակերպման գործում:

1975 թ. հունիսի 28-30-ը Բերգամոյում (Իտալիա) հրավիրվում է Հայ արվեստին նվիրված միջազգային առաջին գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին 14 երկրներից (նաև Հայաստանից) 120 գիտնականներ¹⁷: Հայաստանի պատվիրակության մեջ էր Մ. Հասրաթյանը:

1978 թ. սեպտեմբերի 12-18-ին Երևանում գումարվում է Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովը, որն ուներ հինգ մասնաճյուղ՝ Հին Հայաստանի մշակույթն ու արվեստը, Միջնադարյան հայ ճարտարապետությունը, Միջնադարյան հայ արվեստը, Հայկական մանրանկարչությունը, Նոր և հայ խորհրդային արվեստը: Նախապատրաստական աշխատանքները ղեկավարում էր Մ. Հասրաթյանը:

1985-ին Երևանում Հայ արվեստին նվիրված միջազգային չորրորդ գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները դարձյալ ղեկավարում էր Մուրադ Հասրաթյանը:

Իր գիտական գործունեությանը զուգընթաց, Մ. Հասրաթյանը հայկական ճարտարապետությունն է ներկայացրել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, աշխարհի տարբեր երկրներում զեկուցումներով մասնակցել է Կովկասագիտական միջազգային առաջին գիտաժողովին (1979, Վենետիկ), «Երկրաշարժերը և բնակավայրերը» (1993, Հռոմ), «Հայերը Իտալիայում» (1997, Թուրին, Ճենովա, Լիվոռնո), «Պատմական Հայաստանի քաղաքները և գավառները» (2003, Լոս Անջելես), «Հայկական արվեստ և ճարտարապետություն» (2005, Ջալցբուրգ), «Հայկական գաղթօջախների արվեստը» (2010, Ջամոսյե) միջազգային գիտաժողովներին և Հուշարձանների վերականգնման ժամանակակից տեխնոլոգիաների առաջին կոնգրեսին (2004, Շիրազ) և այլն:

«Հայաստան, իմ բարեկամ» (*Armenie mon amie*) Ֆրանսիայում կազմակերպված Հայաստանի տարվա (21.09.2006-14.07.2007) շրջանակում մշակութային կարևոր միջոցառումներից էր Փարիզում բացված «Հայաստանի 12 մայրաքաղաքները» ցուցահանդեսը, որտեղ լուսանկարներով ու ցուցանմուշներով ներկայացվեց Հայաստանի 12 մայրաքաղաքների՝ Վանի, Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Տիգրանակերտի, Վաղարշապատի, Դվինի, Բագարանի, Շիրակավանի, Կարսի, Անիի, Սսի և Երևանի պատմությունը: Ցուցահանդեսի կազմակերպման գիտական ղեկավարը, ինչպես նաև

¹⁷ Գիտաժողովի օրերին Բերգամոյում բացվում է «4-18-րդ դարերի հայ ճարտարապետությունը» ցուցահանդեսը:

ցուցադրված նյութերի կատալոգի¹⁸ ֆրանսերեն տեքստերի հեղինակը Մ. Հասրաթյանն էր:

Ճարտարապետության վաստակաշատ պատմաբանի գիտական ու գիտակազմակերպական աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական եռանդուն գործունեությանը: Պրոֆեսոր Հասրաթյանը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության ու շինարարության պետական համալսարանում՝ իր երկարամյա փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա ճարտարապետներին, արվեստաբաններին ու մշակութաբաններին: 2000 թ. Հասրաթյանը հրավիրվել է Սորբոնի համալսարան (Փարիզ) և մեկ ամսվա ընթացքում դասախոսություններ կարդացել (ֆրանսերենով) հայկական միջնադարյան ճարտարապետության վերաբերյալ:

1962-ից Մ. Հասրաթյանը Հայաստանի ճարտարապետների միության, 1964-1974թթ.՝ Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, ճարտարապետության պատմության սեկցիայի նախագահ, 1980-ից՝ Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (ներկայումս՝ գործակալություն) գիտական խորհրդի, 1982-ից՝ Պատմական հուշարձանների պահանման հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահության, 1993-ից՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական միության «Հայաստան-Ֆրանսիա» ընկերության վարչության, 1999-ից՝ Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի անդամ, 2001-ից՝ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատան գիտական խորհրդի, Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողովի, 2003-ից՝ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ է: 2013-ին ընտրվել է Ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ: 1998-ից Մ. Հասրաթյանը ԵՃՇՊՀ-ում գործող 029 մասնագիտական խորհրդի անդամ է:

Այսօր էլ հայկական ճարտարապետության պատմագիտության առաջատարի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժինը շարունակում է գրել իր տարեգրության հերթական էջերը: Այսպես, 1996-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել ինստիտուտի ճարտարապետության պատմաբանների տասնամյակների քրտնաջան աշխատանքի արդյունքը՝ «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի անդրանիկ հատորը¹⁹, որն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական մշակույթը՝ հնագույն ժամանակներից մինչև վաղ միջնադար: Իսկ «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի՝ հարուստ պատկերազարդված երկրորդ (2002) և երրորդ (2004) հատորները լույս տեսան Մ. Հասրաթյանի խմբագրությամբ: Հրատարակության է պատրաստ հինգերորդ հատորը, աշխա-

¹⁸ Hasratian M. *Les douze capitales d'Armenie*, Paris, 2006, 64 p.

¹⁹ Հայկական ճարտարապետության պատմություն (վեց հատորով) խմբ. խորհուրդ՝ Բ. Ն. Առաքելյան և ուրիշներ, հ. 1 (պատ. խմբ.՝ Գ. Ա. Տիրացյան), Ե., 1996:

տանքներ են տարվում չորրորդ և վեցերորդ հատորները գրելու ուղղությամբ: Նշենք նաև, որ 2011 թ. լույս տեսավ ավստրիացի ակնավոր արվեստարան Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն գրքի ռուսերեն թարգմանությունը (պատ. խմբագիրներ՝ Մ. Հասրաթյան և Ա. Ադասյան):

Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնում իրենց հետբուհական կրթությունն են շարունակում Իրանի քաղաքացիները, որոնցից մի քանիսն արդեն հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան և վերադարձել հայրենիք:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում 2009-ին ստեղծվեց «Ճարտարապետություն» մասնագիտությամբ որակավորման քննական հանձնաժողով, որի նախագահն է Մ. Հասրաթյանը:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Մ.Հասրաթյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2003), ՀՀ ԳԱԱ Վաստակագրով (2005), ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2009), ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2010), Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալով» (2010), ՀՀ վարչապետի հուշամեդալով (2011): Արժանացել է նաև Թորոս Թորամանյանի անվան մրցանակին (2010):

Այդպիսով Մ. Հասրաթյանն իր արժանի տեղը զբաղեցրեց հայ ճարտարապետության անխոնջ ուսումնասիրողներ՝ Թորոս Թորամանյանի մրցանակի դափնեկիրներ Նիկոլայ Տոկարսկու, Վարազդատ Հարությունյանի, Հովհաննես Խալփախյանի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի առաջին վարիչ Ալեքսանդր Սահինյանի, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Պաոլո Կունեոյի, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Ադրիանո Ալպագո Նովելլոյի կողքին:

Մ. Հասրաթյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձում ասվում է. «Նշանակալի է Ձեր ավանդը հայկական պատմական հուշարձանների չափագրման և մեր մշակույթի գլուխգործոցները գիտական շրջանառության մեջ դնելու գործում: Ձեր երկարամյա և բեղմնավոր գործունեությամբ մեծ ներդրում ունեք հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության ասպարեզում»:

Շնորհավորելով բազմավաստակ գիտնականին իր հոբելյանի առթիվ՝ մաղթենք նրան առողջություն, կենսական անսպառ կորով, գիտաստեղծագործական նոր նվաճումներ՝ ի նպաստ հայկական ճարտարապետության պատմագիտական մտքի զարգացման, ի շահ հայագիտության առաջընթացի:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.

Արվեստագիտության դոկտոր